ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

14 սեպտեմբերի հինգշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

129
(2795)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

«ՄՈՆԱՐԽ»-Ի ԱՐՄԵՆ ՈՒ ԻՐ ՓԵՍԱՆ ՇՏԱԲՆԵՐ ԵՆ ԲԱՑԵԼ ՔՊ-Ի ՀԱՄԱՐ

Այն մարդիկ, որոնք մայրաքաղաք Երեւանում շինարարական բիզնես ունեն, իշխանության հետ սերտ համագործակցում են, տարբեր ճանապարհներով օգնում են նրանց սեպտեմբերի 17-ին կայանալիք ընտրություններում, որպեսզի շինթույլտվությունների հարցերը հեշտությամբ կարգավորեն: «Մոնարխ»-ի Արմեն Գինոսյանն ու նրա փեսա Արմեն Արչի-Սարդարյանը Կենտրոնի թաղապետի միջոցով են փորձում իրենց հարցերը կարգավորել: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացրել էր, թե ովքեր են շրջում Կենտրոն վարչական շրջանի ղեկավար Սամվել Ղուկասյանի հետ՝որպես թիկնապահներ: Նրանք թաղային դեմքեր են, որոնց անունը շրջանառվել է այս կամ այն քրեական պատմության համատեքստում (Նալբանդյան-Վարդանանց խաչմերուկում գտնվող հայտնի «բոքսի դալան»-ի Արմենչիկը եւ ալավերդյանցի Բոյովը, ինչպես նաեւ շինարարական բիզնեսով հետաքրքրված Արմեն Արչի-Սարդարյանը, որը շինթույլտվությունների խնդիր ունի): Նրանք Գիտելիքի օրը՝ սեպտեմբերի 1-ին, Աբովյան 22 հասցեի բակում էին թաղապետի հետ՝ իբրեւ թե ստուգելու արված աշխատանքները: Իսկ ինչո՞ւ էր գործարար Արմեն Արչի-Սարդարյանը, որը հայտնի եւ հաջողակ գործարար Արմեն Գինոսյանի փեսան է, Կենտրոնի թաղապետի հետ թիկնազորի դերում շրջում: Նա շինարարական բիզնեսի մեջ է, շինթույլտվությունների խնդիր ունի, դրա համար էլ Կենտրոնի թաղապետի հետ է մշտապես եւ ՔՊ-ի համար երկու նախընտրական շտաբ է բացել Երեւանի կենտրոնում, որոնց բոլոր ֆինանսական ծախսերը անում է անձամբ: Այդ շտաբների դիմաց մշտապես խցանումներ են, թանկարժեք ավտոմեքենաները կանգնում են երկրորդ՝ չթույլատրված գծում, խախտում երթեւեկության կանոնները, բայց իրավապահները դա չեն նկատում: Նկատենք, որ նույն Արմեն Արչի-Սարդարյանը նախկինում՝ 2018-ին, նախընտրական շտաբներ էր բացել եւ աշխատում էր Դավիթ Սանասարյանի համար, վերջինիս թանկարժեք նվերներ էր փորձում տալ: Նրա աները՝ Արմեն Գինոսյանը, որ օգնում է փեսային շտաբների ձեւավորման, ՔՊ-ի համար ձայներ հավաքելու գործում, խոշոր գործարար է: Նրան է պատկանում Աբովյան-Պուշկին խաչմերուկի վրա գտնվող «Ալեքսանդր» լյուքս դասի հյուրանոցը, Տերյան 91 հասցեում գործող «Մոնարխ» ռեստորանը, որտեղ 2018թ.-ին նշվել էր Նիկոլ Փաշինյանի ավագ դստեր՝ Մարիամ Փաշինյանի ծննդյան 20-ամյակը: Գինոսյանին է պատկանում նաեւ «12 ակումբը», «Մոնարխ» շինարարական ընկերությունը: Գինոսյանը նաեւ զբաղվում է պարենային ապրանքների մեծածավալ ներկրմամբ: Իսկ ինչ վերաբերում է Կենտրոնի թաղապետին, ապա մամուլը գրել էր. «Պուշկինի փողոցից դեպի Հյուսիսային պողոտա ընկած հատվածում Կենտրոնի թաղապետ Սամվել Ղուկասյանն իր մարդկանց հետ ծեծի է ենթարկել երկու ընկերոջ: Մեր տվյալներով՝ դեպքը տեղի է ունեցել երգչուհի Անահիտ Սիմոնյանին պատկանող հունական «Յասսու» ռեստորանից ոչ հեռու»: Իսկ ավելի ուշ՝ օգոստոսի 19-ին, Շամշյանը հրապարակեց, որ Երեւանում՝ Պուշկինի 38 հասցեում գործող «Յասսու» ռեստորանային համալիրում, «փարթի» է իրականացվել, որը կապված է եղել այդ ռեստորանային համալիրի 1 տարվա հետ: Տեսանյութ է առկա, որտեղ երեւում է, թե ինչպես է Երեւան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի ղեկավար Սամվել Ղուկասյանը «Մակարենա» երաժշտության տակ ափսեներ կոտրում մի տղայի գլխին:

ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Հասմիկ Հակոբյանն իր ծանոթ-բարեկամներին Ազգային ժողովում աշխատանքի է տեղավորում: Օգտվելով ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի հովանավորությունից՝նա, իր հորից սկսած, փեսային, ազգականին, ընկերուհուն աշխատանքի է տեղավորել: Հիշեցնենք, որ Հասմիկ Հակոբյանն Ալեն Սիմոնյանի օգնականն էր 2018թ.-ին ձեւավորված խորհրդարանում: 2021թ.-ի ընտրությունների ժամանակ Ալեն Սիմոնյանը նրան տեղավորեց ՔՊ ցուցակում, եւ նա պատգամավորի օգնականից պատգամավոր դարձավ: Ամենաարտոնյալ պատգամավորներից է, ամենաշատ գործուղումների մեկնողը: Այս ընթացքում Հասմիկ Հակոբյանը հասցրել է՝1. հարազատ հորը՝Արմեն Հակոբյանին տեղավորել ԱԺ վարչատնտեսական վարչության ավտոտրանսպորտային բաժնում, 2. իր ազգական Նինա Հակոբյանին աշխատանքի է տեղավորել ՀՀ Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանի մոտ՝որպես գործավարուհի, 3. քրոջ ամուսնուն՝Վարոյին՝ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի վարորդ, 4. իր աղջկա դասընկերուհու մորը եւ մյուս ծանոթին էլ տեղավորել է խորհրդարանի բուժկետում, եւ նրանցից մեկը բուժկետի բուժքույրն է՝Լիլիթ Օհանյանը, 5. Իրավական ապահովման եւ սպասարկման բաժնի պետ էլ նշանակել է տվել Մարի Ստեփանյանին: «Ժողովուրդ» օրաթերթն, իհարկե, այս առիթով մեկնաբանություն վերցրել է Հասմիկ Հակոբյանից, որը, բնականաբար, չի հերքել մեր տեղեկությունները՝նշելով, որ ոչ մեկը չպետք է տուժի՝մյուսի պաշտոնով պայմանավորված: Իսկ 2018թ.-ից առաջ Նիկոլ Փաշինյանը հայտարարում էր. «Կառավարման համակարգը ո՞նց է աշխատել մինչեւ հիմա՝հորքուր, մորքուր, խնամի, ծանոթ, բարեկամ, ընտրությունների վստահված անձ. բոլորին բերել լցրել են պետական կառավարման համակարգ, իսկ հիմա նման խնդիր չկա դրված»: Նիկոլ Փաշինյանը իսկապես շեղվել է հեղափոխական արժեքներից, եւ հիմա բոլոր փաստերը ցույց են տալիս, որ նա ստում էր: Հասմիկ Հակոբյանը փաստացի իրեն պահում է նախկիններից ավելի վատ՝անպատիժ եւ արտոնյալ:

«Ժողովուրդ» օրաթերթը նախկինում գրել էր, որ ՀՀ արդարադատության նախարար Գրիգոր Մինասյանին, բնապահպանության նախարար Հակոբ Սիմիդյանին, տարածքային կառավարման նախարար Գնել Սանոսյանին եւ էլի մի քանի պաշտոնյաների Նիկոլ Փաշինյանը մտադիր է ազատել աշխատանքից սեպտեմբերի 17-ի ընտրություններից հետո: Մինչեւ հիմա իշխող թիմը ՀՀ արդարադատության նախարարի թեկնածու է փնտրում: Իշխանական շրջանակներում առկա տեղեկությունների համաձայն՝ քաղաքական իշխանությունները ՀՀ արդարադատության նախարարին որպես հավանական փոխարինող թեկնածու քննարկել են Մարդու իրավունքների եվրոպական դատարանում (ՄԻԵԴ) ՀՀ ներկայացուցիչ Եղիշե Կիրակոսյանի տարբերակը: Մարդու իրավունքների եվրոպական դատարանում ՀՀ կառավարության լիազոր ներկայացուցիչ Եղիշե Կիրակոսյանի պաշտոնավարման ժամկետն էլ շուտով լրանում է, եւ նրան նոր աշխատանքի տեղավորելու խնդիրը միանգամից կլուծվի՝Գրիգոր Մինասյանին փոխարինող նշանակելով: Ինչպես կզարգանան իրադարձությունները՝ժամանակը ցույց կտա:



Երեւանի քաղաքապետի պաշտոնի համար պայքարը թեւակոխում է վճռորոշ փուլ, եւ օրեր անց պարզ կդառնա՝ընտրապայքարին միացած քաղաքական ուժերից ով ինչքան ձայն է հավաքելու: Մեր աղբյուրները փոխանցում են, որ Երեւանի նախկին քաղաքապետ Հայկ Մարությանը մտադիր չէ պահպանել ավագանու իր մանդատը եւ քաղաքապետ չընտրվելու պարագայում պատրաստվում է հրաժարվել դրանից ու անցնել իր սիրելի գործին՝դերասանությամբ գումար աշխատելուն: Այն, որ Մարությանը չի կարող հավաքել բավարար ձայներ ու դառնալ քաղաքապետ, պարզ է նույնիսկ իր համար ամենալավատեսական հարցումների արդյունքներից, որոնք արվել էին նրա կողմից քաղաքապետի պաշտոնը լքելու պահին եւ այս տարվա սկզբին. հիմա նրա բարձր վարկանիշը զգալի անկում է ապրել: Եթե մեր տեղեկությունները հաստատվեն (իսկ դրանք ճշտելու համար մենք չունենք հնարավորություն, քանզի Մարությանն ու իր թիմը չեն արձագանքում մեր զանգերին, եւ առիթ էլ չունենք կասկածելու մեր տեղեկությունների աղբյուրների վրա), ապա Մարությանը, կարծես թե, եկել է խաղալու հերթական շոուն եւ հեռանալու:

ԶՐՈՒՅՑ

ՊՐՈՌԵԿՏՈՐՆ ՈՒ ՉԾԱՌԱՅԱԾ ՈՐԴԻՆԵՐԸ

Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի պետական ինստիտուտի արտաքին կապերի եւ ռազմավարական ծրագրերի գծով պրոռեկտոր Անժելա Նուշիկյանի երկու որդիները խուսափել են պարտադիր զինվորական ծառայությունից, երկուսն էլ՝ նույն հոդվածով:

Ա. Նուշիկյանը, օգտագործելով իր անձնական կապերը, կեղծ բժշկական թղթերի հիման վրա՝ ազատել է պարտադիր զինվորական ծառայությունից իր որդիներին՝ Նորայր եւ Ռոբերտ Մարուկյաններին: Այս լուրերը փորձեցինք ճշտել հենց պրոռեկտոր Անժելա Նուշիկյանից, որն այժմ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատարն է:

-Կեղծ փաստաթղթերի մասով... Ես ոչինչ չեմ կեղծում, ընդունակ չեմ կեղծելու որեւէ բան: Մեծ տղաս 2 փուլով անցել է հետազոտություններ, եւ առաջացած խնդիրներն ինձ համար եւս անակնկալ էին: Պատահական ենք իմացել, ինձ համար անսպասելի էր, որ որդիս սրտի առեթմիա ունի: Այս լուրերը սխալ տեղեկատվություն են, եւ միայն իմ անձի դեմ չէ այդ ամենը, այլ անվստահություն է եւ՛ իմ, եւ՛ բուժանձնակազմի, եւ՛ «կամիսիա» անցկացնողների նկատմամբ, որոնց արարքը վերագրում են: Ես այդ ընթացքում պաշտոն չեն ունեցել, պաշտոնը ստանձնել եմ 2019 թվականին որպես պրոռեկտոր: Իսկ իմ տղան էդ ստուգումներն անցել է 2017, 2018 թվականներին, եւ պաշտոնի հետ դա կապ ունենալ չի կարող:

-Իսկ Ձեր փոքր տղան ինչպե՞ս է ազատվել պարտադիր զինվորական ծառայությունից:

- Փոքր տղաս 4 փուլով է անցել հետազոտություն: Ես չգիտեմ՝ ինչքան ծանոթներ պետք է ունենանք, որ էդ քանակի թղթերը կեղծեմ: Դա լկտի սուտ է:

-Ի՞նչ պատճառներով է ազատվել Ձեր փոքր որդին:

-Մեծ տղայիս մոտ սրտի առեթմիա է, իսկ փոքր որդուս ախտորոշումը գիպերտենզիան է. բարձր եւ ստատիկ ճնշում ունի որդիս: Եթե լարված իրավիճակներ են լինում, նրա ճնշումը կարող է բարձրանալ՝ հասնելով 170-180-ի: Անկախ զինկոմիսարիատի բժշկական ստուգումներից՝ մենք որդուս տարել ենք առանձին ստուգումների եւս՝ պարզելու, թե ինչ պատճառով է լինում դա: Պարզեցինք, որ դա գենետիկ բնույթ է կրում:

-Տիկին Նուշիկյան, Ձեզ մեղադրում են հենց այդ փաստաթղթերը կեղծելու համար:

-Ես կարող եմ ասել, որ ես այդ հնարավորությունները չունեմ, եւ այս ժամանակաշրջանում, կարծում եմ, սա անհնար է, եւ լինելու դեպքում դրա մասին կիմանային բոլորը: Կարծում եմ նաեւ, որ շատ լավ բոլորս գիտենք, թե դա ինչ գումարների հետ է կապված. այդ գումարները օդից չեն ընկնում: Ճշմարտությունը մեկն է. այդ փաստաթղթերը կեղծված չեն:

-Տիկին Նուշիկյան, իսկ Ձեր փոքր տղան ե՞րբ է անցել այդ ստուգումները:

-Փոքր տղաս այդ ստուգումները անցել է 2020 թվականի վերջից, եւ վերջին ստուգումը եղել է 2022 թվականի գարնանը:

Զրուցեց ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԸ

ԿԱՐԵՎՈՐ

ՓԱՇԻՆՅԱՆԸ ԿՎԵՐԱԴԱՌՆԱ՞

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ Նիկոլ Փաշինյանը տեղափոխվել է նախագահի նստավայր՝ Բաղրամյան 26, եւ զբաղեցրել նախագահի աշխատասենյակը:

Այն նույն Բաղրամյան 26-ում է, որը 2018-ի հեղափոխությունից հետո բացել էր դռները, եւ հայտարարում էին՝ Բաղրամյանի այգում կարող են քաղաքացիները զբոսնել. հիմա ճաղավանդակները նորից զոդված են:

Ըստ օրաթերթի տեղեկությունների՝ վերանորոգումը սկսվել է 2023 թվականի մայիսի 8-ին եւ պիտի ավարտվեր սեպտեմբերի 5-ին: Արդեն սեպտեմբերի 13-ն է, իսկ Փաշինյանը դեռ չի տեղափոխվել:

«Ժողովուրդ» օրաթերթը վարչապետի աշխատակազմի տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչության պետ Արմեն Խաչատրյանից տեղեկացավ, որ վարչապետի աշխատակազմի վարչական շենքում նորոգման աշխատանքները դեռ չեն ավարտվել, ինչի պատճառով էլ Փաշինյանը դեռ Բաղրամյան 26-ում է:

«Դեռ չի վերադարձել, աշխատանքները ընթացքի մեջ են, բայց վարչապետը մոտ ժամանակներս կվերադառնա նախկին նստավայր»,- «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ասաց Արմեն Խաչատրյանը:

Է. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՉԻ ՎՃԱՐԵԼ

Տիգրան Արզաքանցյանի ղեկավարած «Ուժը հայրենյաց» կուսակցությունում արդեն տեւական ժամանակ իսկական քաոս է տիրում:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ կուսակցության աշխատակիցներին ամիսներով աշխատեցնում, սակայն չեն վճարում:

Հատկապես այս նախընտրական շրջանում կուսակցությունը տարբեր աշխատակիցների է ներգրավել քարոզարշավի հետ կապված աշխատանքներում, սակայն նրանց չեն վճարում, աշխատակիցներն էլ ընդամենը մեկ ամիս աշխատելուց հետո հեռանում են:

Թերեւս սա է պատճառը, որ կուսակցությունն ամիսը մեկ մամուլի քարտուղար է փոխում:

«Ժողովուրդ» օրաթերթը փորձեց տեղեկությունը ճշտել նաեւ կուսակցությունից. զանգահարեցինք նախկին խոսնակներից մի քանիսին, պարզվեց, որ նրանք բոլորն էլ դուրս են եկել աշխատանքից ու այլեւս կապ չունեն կուսակցության հետ:

Փորձեցինք նաեւ ճշտել պատճառը, սակայն չցանկացան մեկնաբանել:

Ստացվում է, որ «Ուժը հայրենյաց»-ում ամիսը մեկ նոր աշխատակից են ընդունում, սակայն չեն վճարում:

Ք. Մ.

«ՄԼ ՄԱՅՆԻՆԳ»-Ը՝ ԱՐՏՈՆՅԱԼՆԵՐԻ ՑԱՆԿՈՒՄ

ՀՀ հատուկ քննչական ծառայության աշխատակազմի նախկին ղեկավարին փոխկապակցված խոշոր շինարարական «ՄԼ Մայնինգ» ՍՊԸ-ի շուրջ սկանդալները գնալով մեծանում են: Հատուկ քննչական ծառայության աշխատակազմի նախկին ղեկավար Դավիթ Սուքիասյանին պատկանող «ՄԼ Մայնինգ» ՍՊԸ-ն դուրս է եկել ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոսյանի դեմ: Իսկ ի՞նչն է պատճառը: «Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ «ՄԼ Մայնինգ» ՍՊԸ-ն դիմել է դատարան՝ ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարությունից պահանջելով, որ 20.06.2023թ. թիվ 1112-Ա հրամանը վերացնի եւ բարենպաստ վարչական ակտ կայացնի ՀՀ Արագածոտնի մարզի Արտենիի պեռլիտային ավազների հանքավայրի հարավ-արեւմտյան տեղամասի օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք տալու մասին: Այսինքն՝ նախարարությունն արգելում է «ՄԼ Մայնինգ»-ին ավազ արդյունահանել, իսկ գործարարը ցանկանում է նպատակին հասնել դատարանի միջոցով: Շինարարական այդ խոշոր ընկերության դեմ, «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով, ՀՀ տարբեր մարզերի տարբեր համայնքների ղեկավարներ են դատական հայցեր ներկայացնում: Օրինակ՝ Արարատի մարզի Արարատ համայնքի ղեկավար Ասլան Ավետիսյանը դիմել է ՀՀ վարչական դատարան՝ պահանջելով, որ դատարանը ստիպի Արարատ համայնքի վարչական տարածքի գյուղ Նոյակերտ բնակավայրում գտնվող հողատարածքի մրցույթն անվավեր ճանաչել եւ համայնքի գյուղատնտեսական նշանակության հողամասերը մրցութային կարգով, 25 տարի ժամկետով վարձակալության տրամադրելու մասին որոշումը փաստացի չեղարկել: Այսինքն՝ ընկերությունը փաստացի ինչ-ինչ եղանակով ստացել է գյուղատնտեսական նշանակության հողատարածքներ, որը հիմա համայնքների ղեկավարները հետ են պահանջում: Այն, որ «ՄԼ Մայնինգ» ընկերությունը արտոնյալների շարքում է ինչպես նախկինում, այնպես էլ այսօր, փաստ է: Հիշեցնենք, որ 2019 թվականի մայիսի 23-ին կառավարությունը մաքսատուրքից ազատման արտոնություն տվեց մի շարք ընկերությունների, այդ թվում՝ «ՄԼ Մայնինգ»-ին: Նշենք, որ ընկերությունը, բացի կառուցապատման եւ շինարարական աշխատանքներից, զբաղվում է նաեւ ավազի եւ խճի արդյունահանմամբ: Ըստ կառավարության հիմնավորման՝ ընկերության կողմից ներմուծվող սարքավորումներն օգտագործվելու են հանքարդյունաբերության մեջ (Կոտայքի մարզ): Դրանից առաջ էլ նույն ընկերությունը արտոնություն ստացավ 2018թ. հունվարի 25-ին՝ 2 մլրդ դրամի կամ 5 մլն դոլարի սարքավորումների ներմուծման մաքսատուրքից ազատվելով: Երկու արտոնություն էլ ստացել էր 2017թ.-ին՝ հունիսին եւ օգոստոսին: «Ժողովուրդ» օրաթերթը դատական համակարգից էլ է ահազանգ ստացել այս ընկերության գործունեության մասով, որին կանդրադառնանք առաջիկայում:

ՀԱՅ–ԹՈՒՐՔԱԿԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ

44-օրյա արյունալի պատերազմից անմիջապես հետո հայրենի իշխանությունները Թուրքիայի հետ հարաբերությունները կարգավորելու գործընթաց սկսեցին:

Հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման բանակցություններում Հայաստանի հատուկ բանագնաց նշանակվեց ԱԺ փոխնախագահ Ռուբեն Ռուբինյանը, որը հայ-թուրքական հարաբերությունների հարցով պարբերաբար հանդիպումներ էր ունենում ԱՄՆ-ում Թուրքիայի նախկին դեսպան, թուրք բանագնաց Սերդար Քիլիչի հետ:

Մինչ օրս Ռուբինյանը եւ Քիլիչը չորս հանդիպում են ունեցել. առաջին հանդիպումը կայացել է 2022-ի հունվարի 14-ին Մոսկվայում, մյուս երեքը՝ փետրվարի 24-ին, մայիսի 3-ին եւ հուլիսի 1-ին Վիեննայում:

Ավելին՝ իրենց վերջին հանդիպմանը կողմերը համաձայնել էին հայ-թուրքական սահմանը մասնակի բացել երրորդ երկրների քաղաքացիների համար ու սկսել ուղիղ օդային բեռնափոխադրումները:

Իսկ արդեն այս տարվա սկզբին՝ փետրվարի 11-ին, 1993թ.-ից ի վեր առաջին անգամ բացվեց հայ-թուրքական սահմանին գտնվող Մարգարայի կամուրջը՝ Հայաստանից դեպի Թուրքիա հումանիտար օգնություն ուղարկելու համար, ինչից հետո կողմերը հայտարարեցին, որ աշխատանքներ են սկսելու կամուրջը վերակառուցելու համար, որպեսզի այն անխափան գործարկվի:

Սակայն մինչ օրս ոչ միայն հայ-թուրքական սահմանն է փակ մնում, այլ նաեւ կարծես երկու երկրների միջեւ բանակցություններն են կանգ առել. սրա մասին է վկայում նաեւ այն, որ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման հարցով հատուկ բանագնացները վերջին անգամ մեկ տարի առաջ են հանդիպել:

Չնայած այս փաստերին՝ ՔՊ խմբակցության պատգամավոր, ԱԺ արտաքին հարցերով հանձնաժողովի անդամ Գուրգեն Արսենյանը պնդում է, որ բանակցությունները չեն դադարել, պարզապես ժամանակացույցի խնդիր կա: «Առանձնապես որեւէ խնդիր կամ խոչընդոտ չկա, բանակցությունները շարունակվում են, ինչ-որ փուլում են: Բանագնացների հանդիպումներն էլ չեն դադարել, հավանաբար, հանդիպումների ժամանակացույցն է փոխվել: Մենք շարունակում ենք մեր ջանքերը, որպեսզի հայ-թուրքական երկխոսությունն ակտիվանա»,-ասաց Արսենյանը:

Ք. ՄՈՒՇԵՂՅԱՆ

ԱՐՑԱԽ

ԴԱՏԱՊԱՐՏԵԼ Է ԲԱՔՎԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ Վահե Գեւորգյանը սեպտեմբերի 12-ին Վիեննայում մասնակցել եւ ելույթով հանդես է եկել Հայաստանի նախաձեռնությամբ հրավիրված ԵԱՀԿ հատուկ մշտական խորհրդի նիստին:

ՀՀ արտաքին գործերի նախարարությունից «Ժողովուրդ» օրաթերթին տեղեկացնում են, որ ԱԳ նախարարի տեղակալը ԵԱՀԿ մասնակից պետությունների ներկայացուցիչների ուշադրությունն է հրավիրել Ադրբեջանի կողմից 9 ամիս շարունակ Լաչինի միջանցքի ապօրինի արգելափակման հետեւանքով Լեռնային Ղարաբաղում վատթարացող հումանիտար ճգնաժամի, ինչպես նաեւ Հայաստան-Ադրբեջան սահմանի եւ Լեռնային Ղարաբաղի հետ շփման գծի երկայնքով ադրբեջանական զինված ուժերի կողմից անվտանգային իրավիճակի լարմանն ուղղված գործողությունների վրա:

Ըստ աղբյուրի՝ Վահե Գեւորգյանն ընդգծել է, որ Ադրբեջանի կողմից պարտադրված՝ Լեռնային Ղարաբաղի 120.000 հայ բնակչության անմարդակին շրջափակումը եւ մարդասիրական մատակարարման ամբողջական դադարեցումը, որն ուղեկցվում է առանցքային ենթակառուցվածքների՝ էլեկտրաէներգիայի եւ գազի մատակարարման դիտավորյալ արգելափակմամբ, հանգեցրել է ծայրահեղ հումանիտար ճգնաժամի, որով Ադրբեջանը նպատակ է հետապնդում Լեռնային Ղարաբաղը ենթարկել ամբողջական էթնիկ զտման:

«Լեռնային Ղարաբաղի շրջափակումը հայերի դեմ տասնամյակներ շարունակվող ատելության հրահրման, ուժի եւ ուժի սպառնալիքի կիրառման քաղաքականության, միջազգային մարդասիրական իրավունքի եւ մարդու իրավունքների կոպիտ խախտումների ավելի լայն պատկերի եւ էության մի մասն է, որոնք ցեղասպանական մտադրության նախազգուշացնող նշաններ են», - նշել է Վահե Գեւորգյանը:

Նշենք նաեւ, որ ԱԳ նախարարի տեղակալը շեշտել է, որ Ադրբեջանը պետք է ականջալուր լինի միջազգային հանրության կոչերին եւ անվերապահ իրականացնի Արդարադատության միջազգային դատարանի 2023թ. փետրվարի 23-ին ընդունած եւ հուլիսի 6-ին վերահաստատած որոշումը՝դադարեցնելու Լաչինի միջանցքի ապօրինի արգելափակումը եւ ապահովելու Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի միջեւ անձանց, տրանսպորտային միջոցների եւ բեռների անխափան տեղաշարժը երկու ուղղություններով:

Վահե Գեւորգյանը նշել է դեպի Լեռնային Ղարաբաղ մարդասիրական հասանելիության անխոչընդոտ ապահովման եւ միջազգային համապատասխան կառույցների տեղում ներգրավվածության հրատապությունը:

Անդրադառնալով տարածաշրջանում անվտանգային իրավիճակին՝ ԱԳ նախարարի տեղակալը դատապարտել է Ադրբեջանի կողմից ՀՀ հետ սահմանի եւ Լեռնային Ղարաբաղի հետ շփման գծի երկայնքով իրականացվող անձնակազմի, հարձակողական սպառազինության եւ ռազմական տեխնիկայի տեղաշարժերը եւ կուտակումները: Նա ընդգծել է, որ այս գործողությունները ոչ այլ ինչ են, քան ուժի սպառնալիք, ինչը վկայում է, որ Ադրբեջանը պատրաստվում է Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի դեմ նոր ռազմական ագրեսիայի:

ՀՀ ԱԳՆ տեղեկացմամբ՝ ԱԳ նախարարի տեղակալը վերահաստատել է Հայաստանի հանձնառությունը տարածաշրջանում կայունության եւ տեւական խաղաղության հաստատմանը՝ ընդգծելով, որ այն հնարավոր է կյանքի կոչել միայն ուժի կամ դրա սպառնալիքի եւ մարդու հիմնարար իրավունքների զանգվածային խախտումների բացառման պայմաններում:

Հավելենք, որ ելույթում նաեւ ընդգծվել է Լեռնային Ղարաբաղի ժողովրդի իրավունքների եւ անվտանգության ապահովման ուղղությամբ հատուկ միջազգային ջանքերի եւ Ստեփանակերտի ու Բաքվի միջեւ երկխոսության ամուր միջազգային մեխանիզմի անհրաժեշտությունը, ինչը թույլ կտա շոշափելի արդյունքներ ապահովել գործընթացում:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԱՇԽԱՏԱՆՔԻՑ ԱԶԱՏՎԵՑ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Արցախի նախագահ Արայիկ Հարությունյանի հրաժարականից հետո, իր դիմումի համաձայն, աշխատանքից ազատվել է նաեւ նրա մամուլի քարտուղար Լուսինե Ավանեսյանը:

Տեղեկությունը մեզ հետ զրույցում հաստատեց նաեւ ինքը՝ Լուսինե Ավանեսյանը:

ԱՀ նոր նախագահը դեռ խոսնակ չունի, այդ պաշտոնը դեռ թափուր է:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ՊԱՏԵՐԱԶՄ ՉԻ՞ ՍԿՍՎԻ

Իրանի պաշտպանության եւ զինված ուժերի աջակցման նախարար, բրիգադի գեներալ Մոհամմադ Ռեզա Աշտիանը բացառում է Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ լարվածության սրման համատեքստում պատերազմ սկսելու հնարավորությունը:

Ինչպես հայտնում է Tasnim գործակալությունը, այս մասին նա ասել է Թեհրանում կառավարության նիստի շրջանակներում լրագրողների հետ հանդիպմանը:

«Մենք հավատում ենք, որ տարածաշրջանում պատերազմ չի սկսվի»,- հայտարարել է նա:

Նա եւս մեկ անգամ ընդգծել է, որ Իրանը թույլ չի տա տարածաշրջանում սահմանների որեւէ փոփոխություն:

«Հետեւելով գործընթացին՝ մենք տեսնում ենք, որ ոչ մի կոնկրետ իրադարձություն տեղի չի ունենա»,- վստահեցրել է նա:

ՄԻՇԵԼԸ՝ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

«2023թ. սեպտեմբերի 1-ի մեր հայտարարության մեջ հրապարակայնորեն ուրվագծված տարրերին եւ առաջարկներին համահունչ՝նախագահ Միշելը շարունակել է սերտորեն ներգրավված լինել այդ եւ այլ մոտեցումների առաջմղմանը՝ առաջնային ուշադրություն դարձնելով լարվածության թուլացմանը եւ Արցախի հայերի առջեւ ծառացած հումանիտար իրավիճակին»,- հայտարարել է ԵՄ նախագահ Շառլ Միշելի գրասենյակը՝ անդրադառնալով Լաչինի միջանցքի ապաշրջափակման եւ Բաքու-Ստեփանակերտ ուղիղ երկխոսության անհրաժեշտությանը:

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ խոսելով Աղդամ-Ասկերան ճանապարհով ռուսական մարդասիրական մեքենայի մուտքի մասին Ստեփանակերտ՝ Միշելը նշել է, որ Բաքվի, Երեւանի եւ ղարաբաղահայության ներկայացուցիչների հետ նրա գրասենյակի եւ Տոյվո Կլաարի ամենօրյա աջակցությամբ իրականացվող ջանքերն ուղղված են լարվածության թուլացմանը եւ Ղարաբաղի հայերին հումանիտար հասանելիության ապաշրջափակման համար լուծում մշակելուն:

ՀԱՅՏԱՐԱՐԵՑԻՆ

ՀԵՏԱՊՆԴՈՒՄ ԵՎ ՀԱՐՁԱԿՈՒՄ՝ ԼՐԱԳՐՈՂԻ ՆԿԱՏՄԱՄԲ

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ Նիկոլ Փաշինյանի՝ հուլիսի 25-ին տեղի ունեցած մամուլի ասուլիսից հետո վիրավորանքների եւ ոտնձգությունների արշավ սկսվեց լրագրողների, հատկապես՝ Aravot.am-ի լրագրող Հռիփսիմե Ջեբեջյանի եւ NewDay.am լրատվական կայքի խմբագիր Անի Գեւորգյանի նկատմամբ:

Հայաստանի ժուռնալիստների միությունը հայտարարություն է տարածել, որում ասվում է, որ ներկայումս պրոյեկտվել է Երեւանի ավագանու առաջիկա ընտրությունները լուսաբանող Անի Գեւորգյանի վրա: Ասուլիսից հետո լրագրողի հասցեին համացանցում եւ էլեկտրոնային նամակներով տարածվող սպառնալիքները, ծանր վիրավորանքները, հայհոյանքները եւ ֆիզիկական հաշվեհարդարի կոչերը նոր թափ են հավաքել:

«Այսպես, սեպտեմբերի 11-ին «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ցուցակը գլխավորող Տիգրան Ավինյանի քարոզարշավային հերթական լուրը լուսաբանող Անի Գեւորգյանի նկատմամբ հարձակում են գործել իշխող «Քաղաքացիական պայմանագիր» (ՔՊ) կուսակցության համակիրները, որոնցից ամենագրեսիվը եղել է ՔՊ կուսակցության մոլի աջակից մի կին, որն ավելի վաղ նույնպես աչքի էր ընկել լրագրողների հասցեին հնչեցրած ոչ նորմատիվային բառապաշարով, սպառնալիքներով ու ֆիզիկական հաշվեհարդարի կոչով:

Հարձակումը տեսանկարահանված է, հրապարակված է ինչպես լրագրողի, այնպես էլ հենց իր՝ հարձակում գործող կնոջ սոցցանցային էջով:

Ի դեպ, տեսանյութերից մեկում երեւում է, թե ինչպես է իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության համակիրը լրագրող Անի Գեւորգյանին հրահանգում հեռանալ, չլուսաբանել քարոզարշավը, այսինքն՝ խոչընդոտվում է լրագրողի աշխատանքը, սակայն զարմանալիորեն իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության քաղաքապետի թեկնածու Տիգրան Ավինյանի նախընտրական պաստառը վնասող քաղաքացուն ձերբակալող Քննչական կոմիտեն, օրինակ, չի արձագանքում այս աղաղակող առերեւույթ հանցանքին, ինչպես չեն արձագանքում Ոստիկանությունը, Գլխավոր դատախազությունը»,- ասվում է հաղորդագրությունում:

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ հայտարարությունում հիշատակվում է, որ Անի Գեւորգյանի նկատմամբ կեղտոտ արշավը չի սահմանափակվում միայն լրագրողի նկատմամբ հարձակումներով. թիրախավորվել են նաեւ վերջինիս ընտանիքի անդամները, որոնց լուսանկարները՝ ամենաայլանդակ մեկնաբանություններով, իշխող ՔՊ-ամերձ շրջանակների կողմից տարածվում են սոցիալական ցանցերում:

«Հայաստանի ժուռնալիստների միությունը խստորեն դատապարտում է լրագրողի մասնագիտական գործունեության դեմ ուղղված այս արշավը ու դրանց նկատմամբ իրավապահ համակարգի կողմից արձագանքի բացակայությունը: Կրկնակի ստանդարտների կիրառությունը ոչ միայն չի լիցքաթափելու իրավիճակը, որի պատասխանատվությունը բացառապես գործող իշխանությանն ու իրավապահ համակարգինն է, այլեւ, ընդհակառակը, լարվածության ու հասարակության մեջ խորը պառակտվածության նոր շերտեր է ավելացնելու....

Լրագրողների մասնագիտական ազատ աշխատանքը որեւէ երկրում ժողովրդավարության հիմնասյուներից մեկի՝ խոսքի ազատության երաշխիքն է, պետական մարմինների եւ պաշտոնյաների նկատմամբ քաղաքացիների վերահսկողության գործիքը:

Պետական մարմնի կամ պաշտոնյայի աշխատանքի, գործունեության վերաբերյալ տեղեկատվություն ստանալը քաղաքացու, ընտրողի՝ Սահմանադրությամբ երաշխավորված իրավունք է, որն ապահովվում է, այդ թվում՝ լրագրողի աշխատանքով: Լրագրողի անխոչընդոտ աշխատանքի ապահովումը, լրագրողին հարցազրույց կամ մեկնաբանություն տալը պաշտոնյայի, առավել եւս՝ թեկնածուի պարտավորությունն է»,- ասված է հաղորդագրությունում:

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

ՈՒՂԱՐԿՎԵԼ Է ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ քննչական կոմիտեն ամփոփել է 2023թ. առաջին կիսամյակի ընթացքում ընտանեկան բռնության հանցագործությունների դեպքերի քննության ընդհանուր քրեական շարժընթացը:

Ըստ այդմ՝ 2023թ. 1-ին կիսամյակի ընթացքում ՀՀ քննչական կոմիտեի վարույթում քննվել է ընտանեկան բռնության վերաբերյալ 1051 քրեական վարույթ:

Դրանցից 140-ն ավարտվել է մեղադրական եզրակացությամբ եւ 144 անձի վերաբերյալ ուղարկվել է դատարան, եւս 2 վարույթ ավարտվել է եզրափակիչ ակտով եւ ուղարկվել դատարան, 222 քրեական վարույթ կարճվել է, որից 172-ը՝ ռեաբիլիտացնող, իսկ 50-ը՝ ոչ ռեաբիլիտացնող հիմքով, 83-ով ավարտվել են վարութային եւ ապացուցողական գործողությունները, 7 քրեական վարույթ ուղարկվել է՝ ըստ ենթակայության, 76-ը միացվել է, 521 քրեական վարույթ փոխանցվել է 2023թ. 2-րդ կիսամյակ:

Դատարան ուղարկված վարույթներից 2-ը քննվել են սպանության, 3-ը՝ սպանության փորձի, 3-ը՝ առողջությանը ծանր վնաս պատճառելու, 2-ը՝ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելու, 1-ը՝ ազատությունից ապօրինի զրկելու, 2-ը՝ սեքսուալ բնույթի գործողությունների, 11-ը՝ առողջությանը թեթեւ վնաս պատճառելու, 116-ը՝ այլ հանցագործությունների դեպքերի առթիվ:

Դատարան ուղարկված վարույթներով 144 մեղադրյալից 110-ը հանդիսացել են կին/ամուսին, 20-ը՝ ծնող/տատ ու պապ, 5-ը՝ քույր/եղբայր, 9-ը՝ զավակ/թոռ:

Դատարան ուղարկված վարույթներով 152 տուժողից 14-ը եղել են մինչեւ 12, 4-ը՝ 12-14, 4-ը՝ 14-18, 130-ը՝ 18-ից բարձր տարեկան:

Կարճված վարույթներով 59 անձի նկատմամբ ոչ ռեաբիլիտացիոն հիմքերով քրեական հետապնդում չի իրականացվել, կամ դադարեցվել է քրեական հետապնդումը: 59 անձից 52-ը հանդիսացել են կին/ամուսին, 4-ը՝ ծնող/տատ ու պապ, 1-ը՝ քույր/եղբայր, 2-ը՝ զավակ/թոռ:

Կարճված վարույթներով 221 տուժողից 4-ը եղել են մինչեւ 12, 6-ը՝ 12-14, 6-ը՝ 14-18, 205-ը՝ 18-ից բարձր տարեկան:

ՓՈՐՁԵԼ Է ԻՆՔՆԱՀՐԿԻԶՎԵԼ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ սեպտեմբերի 12-ին՝ ժամը 8:15-ի սահմաններում, 1956 թվականին ծնված մի կին, որն ապրում է կիսակառույց շինությունում, փորձել է վերջ տալ իր կյանքին:

Վերջինս ինքնահրկիզման փորձ է արել, սակայն բնակիչները տեսել են ու փրկել նրա կյանքը: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ կնոջը կիսակառույց շինությունից դուրս են հանում, ու դա է պատճառը, որ նա փորձել է ինքնահրկիզման ճանապարհով վերջ տալ կյանքին:

Նշենք, որ դեպքը եղել է Կենտրոն վարչական շրջանում:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՈՒՇԱԳՐԱՎ

ԿՐԱԿՈՑԻ ՄԻՋԱԴԵՊԸ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ օգոստոսի 23-ին ուշագրավ դեպք էր եղել Աբովյան քաղաքում: 2003 թվականին ծնված տղամարդու կողմից Աբովյան քաղաքի Ինտերնացիոնալ 1-ին շենքի մոտ ինքնաձիգից կրակոցներ էին արձակվել 1985 թվականին ծնված մեկ այլ տղամարդու ուղղությամբ, ինչի հետեւանքով վերջինս ստացել էր մարմնական վնասվածք: Դեպքի վայր էին շտապել իրավապահները ու դեպքով քննություն էին սկսել:

Եվ, ահա, «Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ իրավապահներն օրերս հայտնաբերել են ջրատարում ԱԿՍ տիպի ինքնաձիգը: Կրակոցներ արձակողին փնտրում են, դեպքի հանգամանքները պարզվել են: Ըստ մեր տեղեկությունների՝ միջադեպի մասնակիցները ընկերներն են, ու մեկը մյուսի հետ որոշ տարաձայնություններ է ունեցել, ինչի պատճառով ընկերներից մեկը սպանության փորձ էր կատարել:

ԻՆՔՆԱՄՊԱՆ Է ԵՂԵԼ

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ սեպտեմբերի 12-ին՝ ժամը 19:50-ի սահմաններում, հրազենային վիրավորումից մահացել է ՀՀ ՊՆ N զորամասի զինծառայող Ալեքս Սուրենի Ավանեսյանը: ՀՀ ՊՆ-ից հայտնում են, որ դեպքի հանգամանքներն ամբողջովին պարզելու նպատակով ընթանում է քննություն: Պաշտպանության նախարարությունը վշտակցում եւ զորակցություն է հայտնում զինծառայողի ընտանիքի անդամներին, հարազատներին եւ ծառայակից ընկերներին: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ զինվորին գտել են մարտական դիրքում: Ըստ նախնական վարկածի՝ նա ինքնասպան է եղել: Իրավապահներն այս պահին աշխատում են, ու արդեն տվյալներ կան, որ կրկին դիրքում քնելու թեմայով տարաձայնություններ են եղել:

ԴԱՏԱՊԱՐՏՎՈՒՄ ԵՆ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԸ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ Էրիկ Աղաջանյանին, Կարեն Առաքելյանին, Երվանդ Հովհաննիսյանին, Գեւորգ Սարյանին, Գարիկ Ալեքսանյանին, Վարդան Ավետիսյանին, Սուրեն Մարտիրոսյանին, Խորեն Ավագյանին, Աշոտ Ենոքյանին, Վլադիմիր Չիլինգարյանին, Գառնիկ Սադոյանին, Կարեն Դիլանյանին, Սմբատ Հակոբյանին, Հովհաննես Բաղալյանին, Արսեն Դավթյանին, Նարեկ Մկրտչյանին, Տիգրան Եփրեմյանին, Արմեն Փարսադանյանին, Արման Սահակյանին, Վահե Խուդավերդյանին, Արթուր Մկրտչյանին, Հրայր Սիմոնյանին, Մանվել Հարությունյանին, Արտակ Պողոսյանին, Վահրամ Հարությունյանին, Արթուր Զախարյանին, Գրիշա Հովհաննիսյանին, Աշոտ Մուսայելյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նրանք, հանդիսանալով ՀՀ ՊՆ Ն զորամասի զինծառայողներ, 2020թ.-ի հոկտեմբերի 08-ին տեղափոխվել են մարտական կարգադրությամբ նախատեսված վայր եւ անցել ծառայողական պարտականությունների կատարմանը, իսկ 14.10.2020թ.-ին ՀՀ-ում հայտարարված ռազմական դրության պարագայում հրաժարվել են զինվորական առանձին պարտականությունները կատարելուց, որը զուգորդվել է դրանց փաստացի դադարեցմամբ, այն է՝ թողել են մարտական դրությամբ նախատեսված վայրը եւ առանց համապատասխան թույլտվության վերադարձել են զորամաս:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ սեպտեմբերի 12-ից 13-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 53 դեպք, որոնցից 6-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՔ

ՈՉՆՉԱՑՆՈՒՄ ԵՆ ԴԵՆԴՐՈՊԱՐԿԸ

Շրջակա միջավայրի նախարարության կազմում գործող «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար Լեւոն Տեր-Սիմոնյանը օգոստոսի 18-ին հրաման է ստորագրել Իջեւանի դենդրոպարկի երկարամյա տնօրեն Մեխակ Սայադյանին հաստիքների կրճատման պատճառով աշխատանքից ազատելու, նրա հետ 2006 թվականին կնքված պայմանագիրը լուծելու մասին: Մեխակ Սայադյանը աբսուրդ է համարում, որ տարվա կեսին հաստիքացուցակ են փոխել: Մ. Սայադյանի կինը եւ գործընկերը՝ Նարինե Ներսիսյանը, որը ղեկավարում է Իջեւանի դենդրոպարկի մի մասի տարածքը երկարաժամկետ վարձակալած «Կանաչ Սիմֆոնիա» ՍՊԸ-ն, հանցագործության մասին լրացուցիչ հաղորդում է ներկայացրել Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահ Արգիշտի Քյարամյանին, հայտնել այն մասին, որ ոռոգման ջրի բացակայության հետեւանքով դենդրոպարկում չորացած ծառերը հիվանդացել են, ի հայտ են եկել վնասատուներ, որոնք վնասել են դենդրոպարկի առողջ ծառերը, «Կանաչ սիմֆոնիա» ՍՊԸ-ի վարձակալած տարածքում հազվագյուտ, արժեքավոր ծառերը, թփերը, տնկիները, դենդրոպարկին հարակից տարածքում գտնվող իրենց տան բակի ծառերը, նաեւ դենդրոպարկին հարակից անտառի ծառերը: Նարինե Ներսիսյանն իր դիմումում հայտնել է, որ վնասատուներից արդեն չորացել են իրենց տան բակում գտնվող, 4 մետր բարձրություն ունեցող 6 հատ սյունաձեւ թուաներ, թաղարներում աճեցվող 60 հատ կովկասյան եւ ղրիմյան սոճիներ, 6 հատ արծաթափայլ եղեւնի, գիհիներ, ուռենիներ եւ այլն. առայժմ վնասը կազմում է 2 միլիոն 100 հազար դրամ:

Մեխակ Սայադյանը հայտնում է, որ շրջակա միջավայրի՝ իրար փոխարինող նախարարները, ինչպես նաեւ «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրենները, փոխանակ միջոցներ ձեռնարկեին Իջեւանի գինու կոնյակի գործարանի կողմից Աղստեւ գետի հունում ապօրինի կատարված շինարարության հետեւանքով Իջեւանի դենդրոպարկի ջրազրկման հետեւանքները վերացնելու ուղղությամբ, «ելքը» գտան այգու վարձակալ «Կանաչ Սիֆոնիա» ՍՊԸ-ին ֆինանսական եւ բարոյական վնասներ հասցնելու մեջ, որի հետեւանքով առկա է չորացող եւ վերացող բուսաբանական այգի՝ դենդրոպարկ: Դենդրոպարկում չորացած 1500-ից ավելին ծառերը, թփերը, 24 հազար տնկիները չհեռացնելու հետեւանքով (չորացածները փտում են) այգում տարածվել են վնասատուներ եւ հիվանդություններ:

Մ. Սայադյանն ասում է. «Փորձում ենք տարբեր քիմիկատներով կանգնեցնել հիվանդությունների եւ վնասատուների տարածումը, բայց բարձրաբուն՝ մինչեւ 30 մետր հասնող ծառերին քիմիկատներ սրսկել հնարավոր չի լինի»:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԸՆԴՈՒՆՎԵՑ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՕՐԵՆՔՆԵՐՈՒՄ ՈՒ ՆԱԽԱԳԾԵՐՈՒՄ

Սեպտեմբերի 13-ի ԱԺ հերթական նիստում երկրորդ ընթերցմամբ քննարկվել եւ ընդունվել է երկու օրենսդրական նախաձեռնություն: Այս մասին «Ժողովուրդ» օրաթերթին հայտնում են ԱԺ-ից:

««Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» եւ ««Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» նախագծերի փաթեթով առաջարկվում է հստակեցնել «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» օրենքի լիազորող նորմերը:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ առաջարկվում է օրենքից հանել նաեւ «հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի ծառայությունների փոխակերպման միջոցառումների ծրագիրը» հաստատելու նորմը, իսկ «Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» օրենքից՝ «հաշմանդամության գնահատման համակարգի բարեփոխումների եւ անձի ֆունկցիոնալության գնահատման համակարգ ներդնելու ծրագիրը» հաստատելու նորմը, քանի որ նախատեսվել է դրանք չհաստատել որպես առանձին ծրագրեր, այլ դրանց իրականացմանն առնչվող գործողություններն արտացոլել հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման համալիր ծրագրում:

Բացի այդ, անձի ֆունկցիոնալության գնահատմանն անցնելու համատեքստում՝ առաջարկվում է սահմանել համապատասխան կարգավորումներ միջպետական համաձայնագրի դրույթներն իրագործելու համար, իսկ Կառավարությանն էլ առաջարկվում է լիազորել սահմանելու այդ գործընթացի առանձնահատկությունները:

Ըստ հիմնական զեկուցող, ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Տաթեւիկ Ստեփանյանի՝ առաջին ընթերցումից հետո Կառավարությունը ներկայացրել է տեխնիկական բնույթի առաջարկություններ, որոնք ընդունվել են:

Հավելենք, որ հարակից զեկուցող, ԱԺ աշխատանքի եւ սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի անդամ Մարիամ Պողոսյանը, կարեւորելով օրենսդրական փաթեթի ընդունումը, տեղեկացրել է, որ Կառավարության ներկայացրած բովանդակային փոփոխությամբ այսուհետ 3-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձինք դեղորայքը կստանան ոչ թե 50 տոկոս զեղչով, այլ անվճար:

««Երեխայի իրավունքների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծով առաջարկվում է երեխաների իրավունքների պաշտպանության տարեկան ծրագրերը փոխարինել համալիր ծրագրով, ընդ որում՝ 2017-2021 թվականների ռազմավարական պլանավորման գնահատման արդյունքների եւ երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքի իրացմանն ու ներդաշնակ զարգացմանն ուղղված 2020-2023 թվականների համալիր ծրագրի ավարտից հետո նաեւ նշված ծրագրի գնահատման արդյունքների հաշվի առնմամբ սահմանել ոլորտային ընդգրկուն միջոցառումներ, որոնք անդրադարձ կկատարեն երեխայի բոլոր իրավունքների իրացմանը եւ պատասխանատու գերատեսչությունների համար կլինեն ուղեցույց առաջիկա տարիների համար՝ հստակ ուրվագծելով ոլորտային քաղաքականությունը:

Հիմնական զեկուցող, ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Տաթեւիկ Ստեփանյանը տեղեկացրել է, որ առաջին ընթերցումից հետո առաջարկություններ չեն ներկայացվել:

ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ Ռուստամ Բաքոյանը ներկայացրել է գլխադասային հանձնաժողովի դրական եզրակացությունը:

Նշենք նաեւ, որ խորհրդարանը քվեարկությամբ ընդունել է սեպտեմբերի 12-ին քննարկված օրենսդրական նախաձեռնությունները:

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

ԻՐԱՎԻՃԱԿԸ՝ ՋԵՐՄՈՒԿՈՒՄ

Մեկ տարի առաջ՝ այս օրը, Ադրբեջանը սկսեց ինտենսիվ ռմբակոծել Ջերմուկի մատույցները:

Կեսգիշերն անց սկսել էին ռմբակոծել քաղաքը շրջապատող սարերն ու հարակից տարածքը. ռմբակոծությունը տեւել էր 2-3 ժամ: Ադրբեջանական զինուժի կրակի հետեւանքով հրդեհ էր բռնկվել Ջերմուկի անտառներում: Իրավիճակը հետագայում ավելի լարվեց. Ադրբեջանի ԶՈՒ ստորաբաժանումները Գորիսի, Սոթքի եւ Ջերմուկի ուղղությամբ հրետանային միջոցներից, խոշոր տրամաչափի հրաձգային զինատեսակներից ինտենսիվ կրակ էին վարում՝ կիրառելով նաեւ ԱԹՍ-ներ:

Ավելի ուշ Նիկոլ Փաշինյանը ԱՊՀ երկրների ղեկավարների գագաթնաժողովին հայտարարեց, որ սեպտեմբերին ադրբեջանական ագրեսիայի հետեւանքով զոհվել կամ անհետ կորել է 210, վիրավորվել՝ 293 զինծառայող, անհետ կորածների թիվը 28 է:

Չնայած հանկարծակիի գալուն՝ քաղաքի բնակչությունը շատ արագ պատսպարվեց ապաստարաններում, բնակչության մեծ մասը տարհանվեց, մոտակա մի քանի օրերին էլ քաղաք էին անընդհատ այցելում միջազգային կազմակերպությունները:

Ավելի ուշ քաղաքն անցավ իր բնականոն կյանքին, սակայն ադրբեջանական կողմը մինչ օրս շարունակում է իր սադրանքները:

ՄԱՐԻԱՄ ՂԱՋԱՐՅԱՆ

ԲԱՅՐԱՄՈՎԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Ադրբեջանը կրկին ապատեղեկատվություն է տարածել:

Ադրբեջանի արտգործնախարար Ջեյհուն Բայրամովը լրագրողների հետ ճեպազրույցում հանդես է եկել հայտարարությամբ՝ մասնավորապես նշելով, որ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ խաղաղության պայմանագրի կնքման շուրջ բանակցությունները ներկայումս փակուղում են Հայաստանի սադրանքների պատճառով:

«Ցավոք սրտի, այս պահին մենք տեսնում ենք լճացում Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ խաղաղության համաձայնագրի կնքման գործընթացում, եւ դրա պատճառը Հայաստանի Հանրապետության, ինչպես նաեւ խամաճիկ ռեժիմի ներկայացուցիչների խիստ սադրիչ հայտարարություններն ու գործողություններն են»:

Որպես սադրանքի օրինակ՝ ադրբեջանական դիվանագիտության ղեկավարը բերել է սեպտեմբերի 9-ին Ղարաբաղում կազմակերպված ընտրությունները, ինչպես նաեւ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի շնորհավորանքը՝ Ղարաբաղի անկախության հռչակման 32-րդ տարեդարձի կապակցությամբ:

Անցյալ տարի Երեւանն ու Բաքուն Ռուսաստանի, ԱՄՆ-ի եւ Եվրամիության միջնորդությամբ սկսեցին քննարկել ապագա խաղաղության պայմանագիրը: Այս տարվա մայիսի վերջին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը հայտարարեց, որ Երեւանը պատրաստ է ճանաչել Ադրբեջանի ինքնիշխանությունը խորհրդային սահմաններում, այսինքն՝ Ղարաբաղի հետ միասին:

Սեպտեմբերին ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը նշել էր, որ Հայաստանի ղեկավարությունը, ըստ էության, ճանաչել է Ադրբեջանի ինքնիշխանությունը Ղարաբաղի նկատմամբ:

Ինչպես ասել է Ադրբեջանի ղեկավար Իլհամ Ալիեւը, Ադրբեջանը եւ Հայաստանը կարող են մինչեւ տարեվերջ խաղաղության պայմանագիր ստորագրել, եթե Երեւանը չփոխի իր դիրքորոշումը:

ՕՖԵԼՅԱ ՅՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

● Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 21 ճՏՊ. 1 մարդ զոհվել է, 27-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

«ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ»

ԳԼԽԱՎՈՐԵԼ Է ԱՐԱ ԱՎԱԳՅԱՆԸ

Արա Ավագյանը նշանակվել է «ՎՏԲ-Հայաստան» բանկի գլխավոր տնօրեն-տնօրինության նախագահ: Նոր ղեկավարը կշարունակի զարգացնել բանկի գործունեությունը երկրում, բարձրացնել բանկի ֆինանսական ցուցանիշները, ներգրավել հաճախորդներ, ներդնել շուկայում նոր պրոդուկտներ եւ բարելավել հեռահար սպասարկման ծառայությունները:

Արա Ավագյանը ավարտել է Երեւանի տնտեսաիրավագիտական համալսարանը: Ֆինանսական ոլորտում աշխատում է ավելի քան 25 տարի: «ՎՏԲ-Հայաստան» բանկում սկսել է աշխատել 2020թ.-ից՝ որպես բանկի Կորպորատիվ բիզնեսի զարգացման դեպարտամենտի տնօրեն: Անցյալ տարվա հուլիսին նշանակվել է «ՎՏԲ-Հայաստան» բանկի գլխավոր տնօրեն-տնօրինության նախագահի ժամանակավոր պաշտոնակատար:

«Այսօր «ՎՏԲ-Հայաստան» բանկը սպասարկում է երկրի ավելի քան 380 հազար մանրածախ եւ 11 հազար կորպորատիվ հաճախորդների: Երկրի՝ կենսաթոշակային տարիքի բնակչության ավելի քան 20%-ը կենսաթոշակ է ստանում մեր բանկի քարտերով: Մենք շուկայում ակտիվորեն զարգացնում ենք միջազգային փոխանցումները Ռուսաստանից Հայաստան եւ հակառակ ուղղությամբ, որոնք թույլ են տալիս կարճ ժամանակում գումարներ ուղարկել հարազատներին եւ ընկերներին: Մեր հիմնական խնդիրն է պահպանել եւ շարունակել ամրապնդել մեր դիրքերը երկրի բանկային շուկայում՝ ներգրավելով նոր հաճախորդներ, վերափոխելով ցանցի աշխատանքը եւ ներդնելով նոր պրոդուկտներ ու ծառայություններ», - նշում է «ՎՏԲ-Հայաստան» բանկի գլխավոր տնօրեն - տնօրինության նախագահ Արա Ավագյանը:

«ՎՏԲ-Հայաստան» բանկը 2004թ.-ից հանդիսանում է ռուսաստանյան «ՎՏԲ» բանկի դուստր ընկերություն: Բոլոր սեգմենտների հաճախորդներին հասանելի են բանկի 53 մասնաճյուղեր, ավելի քան 200 բանկոմատ եւ 50-ից ավելի վճարային տերմինալներ ամբողջ երկրի տարածքում:

«ՎՏԲ-Հայաստան» բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

ՕԳՆՈՒԹՅՈՒՆ

Ռուսաստանն Աղդամ-Ասկերան երթուղով Լեռնային Ղարաբաղ ուղարկած բեռի պարունակությունը համաձայնեցրել է տարածաշրջանի բնակչության հետ եւ դատապարտում է տեղեկատվական ոլորտի այն ներկայացուցիչներին, որոնք փորձել են արժեզրկել այդ օգնությունը: «Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ այս մասին հայտարարել է ՌԴ ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչ Մարիա Զախարովան Արեւելյան տնտեսական ֆորումի շրջանակներում կայացած ճեպազրույցում:

«Ես կոչ եմ անում հայ հանրությանը, ի թիվս այլ բաների, վերլուծել հրապարակված նյութերը, այդ թվում՝ հայկական ռեսուրսներում, տեսնել, թե ով ինչ է գրել, լսել, թե մենք ինչ ենք ասում»,- ասել է ՌԴ ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչը: Զախարովան նշել է, որ ռուս խաղաղապահների միջնորդությամբ Ռուսաստանի Կարմիր խաչի ներկայացուցիչներն այս մարդասիրական օգնությունը բաշխել են բազմազավակ ընտանիքներին, «նրանց, որոնք խիստ կարիքի մեջ են եղել, այդ թվում՝ ցածր եկամուտ ունեցող մարդկանց»:

ԴԺԳՈՀՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ՎԱՅԼԴԲԵՐԻԶ»-Ի ՀԱԿԱՌԱԿ ԿՈՂՄԸ

«Վայլդբերիզ»-ը ոչնչացնում է Հայաստանի տնտեսությունը. հենց այս կարգախոսով էլ մի խումբ տնտեսվարողներ սկսեցին իրենց բողոքի ակցիան կառավարության շենքի մոտ: Stop Wildberries Armenia նախաձեռնության անդամների դայֆարը սկսվեց ֆեյսբուքյան հարթակից, մի խումբ տնտեսվարողներ սկսեցին ակտիվ գրառումներ անել, հետո էլ համախմբվեցին եւ նախաձեռնեցին բողոքի ցույցեր կառավարության շենքի մոտ:

«Շտապել է պետք, կոչով դիմում ենք Հայաստանի Հանրապետության 120.000 փոքր եւ միջին տնտեսվարող սուբյեկտներին միանալ մեր պայքարին, կանգնեցնել ռուսական «Վայլդբերիզ»-ի ծավալուն մուտքը Հայաստանի Հանրապետություն եւ այդպիսով խուսափել ոչնչացումից: Եթե մեր պայքարը չլինի միասնական ռուսական «Վայլդբերիզ» կորպորացիայի դեմ, ըստ վերլուծությունների՝ 2024 թվականի կեսերին մրցակցությունից դուրս կշպրտվեն այժմ գործող մեծածախ եւ մանրածախ խանութների 90 տոկոսը: Բիզնեսի ներկայացուցիչները կարող են մեզ միանալ՝ գրելով էջին»:

Stop Wildberries Armenia նախաձեռնության անդամ Արման Թումասյանի հետ բազմիցս զրուցել ենք այս թեմայով՝ հասկանալու համար, թե ինչու չեն փորձում համագործակցել կամ այնպիսի գներ սահմանել, որպեսզի սպառողը կարողանա օգտվել եւ օգուտ տալ ներսի, այլ ոչ թե դրսի շուկային:

«Այս ամենը հետո կհանգեցնի արտագաղթի, քանի որ շատ տնտեսվարողներ մի քանի ամիս հետո արդեն խնդիրներ են ունենալու բանկերի եւ շատ այլ կառույցների հետ: Մեր խանութներում, գիտեք, թե ինչ է կատարվում. դպրոցական իրերը չեն կարողացել վաճառել, եւ ներկա պահին մարդիկ ստիպված վաճառում են կամ ինքնարժեքով, կամ այնպիսի զեղչերով, որ կարողանան գումար հավաքել ու փախչել»:

Արման Թումասյանը հավելեց նաեւ, որ ոչ մի կերպ չեն կարող համագործակցել «Վայլդբերիզ»-ի հետ, քանի որ դրա համար իրենք հարկեր եւ տուրքեր են մուծում, եւ երբ շուկան ամբողջովին ոչնչանա, նոր «Վայլդբերիզ»-ը այն նույն կոշիկը, որը վաճառում էր 4000, կվաճառի 12.000 դրամով: Բնակիչներն էլ իրենց բողոքներն ունեն՝ կապված սպասարկման, հերթերի եւ շատ այլ նման հանգամանքների հետ: Սպառողներից, օրինակ, Շուշանն այնպիսի հետաքրքիր տարբերակ նշեց, որին տնտեսվարողները կարող են հետեւել. «Զարմացած եմ բոլոր այն տնտեսվարողների վրա, որոնք բողոքում են «Վայլդբերիզ»-ի դեմ: Իմ համեստ կարծիքով՝ այն ժամանակը, որը վատնեցին բողոքի ցույցեր իրականացնելու, դիմում-բողոք գրելու վրա, կարելի էր օգտագործել՝ ի օգուտ իրենց, եւ սովորել, թե ինչպես վաճառել «Վայլդբերիզ»-ում, այսինքն՝ տեղական բիզնեսը տեղափոխել օնլայն հարթակ եւ վաճառել մի քանի անգամ շատ նաեւ այլ երկրներում: Օրինակ՝ հիշում եք, երբ քովիդի ժամանակ շատ մասնագետներ մնացին անգործ, նրանցից ավելի ճկունները, տխրելու ու բոյկոտելու փոխարեն, շատ արագ սովորեցին ժամանակակից մասնագիտություններ եւ սկսեցին աշխատել օնլայն: Սա կարծում եմ՝ շատ մեծ հնարավորություն էր զարգացնելու տեղական բիզնեսը. միեւնույնն է, մարդիկ շարունակելու են օգտվել օնլայն հարթակներից»:

Սպառողներից Մարին ավելի շատ դժգոհում է սպասարկումից, հետո նոր թանկ վաճառելուց. «Ո՞վ է մեղավոր, որ գնում են ապրանք են բերում Թուրքիայից, Չինաստանից եւ մեկին տաս վաճառում են, ո՞վ է մեղավոր, որ դեռ խանութ չմտած՝ ուզում ենք դուրս գալ: Հոգնել ենք թե՛ իրենց սպասարկումից, թե՛ մունաթ դեմքերից, թե՛ խոսելու տոնից: Մեզ էլ հաճելի չէ նստել ապրանք պատվիրել, հասցե փոխել, սպասել մի քանի շաբաթ: Ես համաձայն եմ մի փոքր ավելի վճարել, քան հայաստանյան մի շարք խանութներ մտնել»:

Մենք փորձեցինք կապ հաստատել «Վայլդբերիզ»-ի հայաստանյան գրասենյակի հետ, բայց մեր զանգերը մնացին անպատասխան, եւ որեւէ մեկնաբանություն այդպես էլ չեղավ:

ՕՖԵԼՅԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԻՐԱՎԵԿՈՒՄ

ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ Է COVID-19-Ի ԵՆԹԱՏԵՍԱԿ

Առողջապահության համաշխարհային կազմակերպության տվյալներով՝ COVID-19-ի դեպքերի աճ է գրանցվում ամբողջ աշխարհում, իսկ եվրոպական տարածաշրջանում աճում է օմիկրոնի մի քանի ենթատեսակներով պայմանավորված հոսպիտալացումների թիվը:

Ինչպես հայտնում են ՀՀ ԱՆ-ից, հիմնականում շրջանառվում են օմիկրոնի BA.2.86 (Pirola) եւ EG.5 (Eris) տարբերակները:

Հայաստանում օրերս հայտնաբերվել է օմիկրոնի նոր՝ ակրուքս ենթատեսակը: Սեպտեմբերի 12-ի տվյալներով՝ վերջին 7 օրում մեր երկրում արձանագրվել է COVID-19-ի 71 դեպք, ինչը, նախորդ շաբաթվա համեմատ (42 դեպք), աճել է 29-ով:

Թեստավորման դրական արդյունքները եւս, նախորդ շաբաթվա համեմատ, աճել են՝ կազմելով 29.1% (նախորդ շաբաթ՝ 28.4%):

Հաշվի առնելով, որ կանխատեսվում է սուր շնչառական վարակների (ՍՇՎ)՝ ներառյալ կորոնավիրուսային հիվանդության սեզոնային հիվանդացության եւ հոսպիտալացման աճ՝ ԱՀԿ-ն շարունակում է խրախուսել բոլոր երկրներին մեծացնել հսկողությունը, COVID-19-ի նկատմամբ թեստավորումը, սեկվենավորումը՝ շրջանառվող նոր տարբերակների ռիսկը գնահատելու համար:

Հայաստանում ՍՇՎ եւ կորոնավիրուսային հիվանդության դեպքերը կանխարգելելու եւ վաղ հայտնաբերելու նպատակով Առողջապահության նախարարությունը հորդորում է պատվաստվել սեզոնային գրիպի եւ կորոնավիրուսային հիվանդության դեմ, սուր շնչառական վարակին բնորոշ ախտանշանների դեպքում՝ ջերմության բարձրացում (մինչեւ 38-400C), գլխացավ, մկանային ցավ, կոտրտվածության զգացում, կոկորդի ցավ, չոր հազ, քթահոսություն, դիմել բժշկական կազմակերպություն կորոնավիրուսային հիվանդության թեստավորման եւ ժամանակին բժշկական օգնություն եւ սպասարկում ստանալու նպատակով:

Առողջության առաջնային պահպանման օղակում եւ բժշկական կազմակերպություններում COVID-19-ի վաղ հայտնաբերման նպատակով այժմ ՍՇՎ-ով պացիենտների շրջանում իրականացվում է կասկածելի դեպքերի թեստավորում:

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՄԱՏՅԱՆՆԵՐ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը շրջաբերական գրություն է ուղարկել Երեւանի քաղաքապետարանին եւ ՀՀ մարզպետարաններին՝ պարզաբանելով հանրակրթական դպրոցներում էլեկտրոնային մատյանների լրացման կարգավորումներին առնչվող հարցերը՝ պայմանավորված հանրակրթական նոր չափորոշչի ներդրման գործընթացով:

Շրջաբերականում, մասնավորապես, նշվում է. «Թեմատիկ պլանները ներբեռնվում են էլեկտրոնային մատյան՝ Word կամ PDF ձեւաչափով:

Համակարգը հնարավորություն է տալիս թեմատիկ պլանները գրանցել էլեկտրոնային մատյանում՝ ըստ թեմաների եւ դասերի, եւ ամենօրյա լրացման ժամանակ ընտրել համապատասխան ցանկից: Այս ձեւով լրացնելու դեպքում, որպես ոչ պարտադիր լրացման դաշտ, առկա են նաեւ թեմայի նպատակները եւ վերջնարդյունքները: Ուսուցիչները կարող են ընտրել էլեկտրոնային մատյանի լրացման իրենց համար ավելի նախընտրելի տարբերակը:

● «Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄԵԿՆԱՐԿԵՑ

ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ Ի ՊԱՏԻՎ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում մեկնարկեց «Արամ Խաչատրյան - 120» խորագրով միջազգային գիտաժողովը:

Գիտաժողովի նպատակն է ներկայացնել խաչատրյանագիտության արդի վիճակը, քննության առնել հայականավոր կոմպոզիտորի ստեղծագործական, կատարողական, երաժշտական, հասարակական գործունեությունը, արժեւորել նրա թողած ժառանգությունը, բացահայտել նրա ստեղծագործության դերը հայ եւ համաշխարհային երաժշտության մեջ, նախանշել զարգացման ուղիները:

«Աշխարհահռչակ կոմպոզիտոր, դիրիժոր, մանկավարժ, հասարակական գործիչ, արվեստագիտության դոկտոր Արամ Խաչատրյանը ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի 80-ամյա պատմության ընթացքում միակ երաժիշտ ակադեմիկոսն է: Նա ակադեմիկոս է ընտրվել 60 տարի առաջ՝ 1963 թվականի մարտի 9-ին, ակադեմիայի նախագահ Վիկտոր Համբարձումյանի առաջարկությամբ: Այդ օրվանից մինչեւ իր կյանքի վերջն Արամ Խաչատրյանը սերտորեն կապված էր ակադեմիայի, մասնավորապես՝ Արվեստի ինստիտուտի հետ: Պատահական չէ, որ նա ցանկացել է, որպեսզի իր թանգարանը բացվի եւ գործի հենց Արվեստի ինստիտուտին կից: Արամ Խաչատրյանի ստեղծագործական գործունեության ուսումնասիրության հարցերին նվիրված ակադեմիական առաջին գիտական նստաշրջանը գումարվել է այս դահլիճում 1974 թվականի հոկտեմբերի 22-ին, որին մասնակցել է Արամ Խաչատրյանը: Այդ գիտական նստաշրջանը համախմբել է համամիութենական երաժշտագիտական մտքի առաջատար ուժերին: 13 պետություններում ներկայացվել է Խաչատրյանի ստեղծագործությունը, գործունեությունը, արժեւորվել այն թե՛ որպես ազգային երաժշտության եւ մշակույթի երեւույթ, թե՛ որպես Արեւելքի եւ Անդրկովկասի, սովետական եւ համամարդկային երաժշտական մշակույթի երեւույթ: Այսօր կրկին, սակայն՝ առանց Արամ Խաչատրյանի, այս նույն դահլիճում հավաքվել են արդի միջազգային արվեստագիտության, մասնավորապես՝ երաժշտագիտության վաստակաշատ ներկայացուցիչներ եւ երիտասարդ հետազոտողներ աշխարհի 8 երկրներից: Սա վկայում է այն մասին, որ անցած տասնամյակների ընթացքում աշխարհում ոչ միայն չի նվազել հետաքրքրությունն Արամ Խաչատրյանի հանճարեղ երաժշտության հանդեպ, այլեւ նրա ստեղծագործական գործունեությունը շարունակում է մնալ հայ եւ օտարազգի հետազոտողների ուշադրության կենտրոնում: Այս տարվա հոկտեմբերին ԳԱԱ-ն բոլորում է իր հիմնադրման 80-ամյակը, եւ ես կարծում եմ, որ ինչպես անցած 80 տարիների ընթացքում, այնպես էլ հետագայում ակադեմիան՝ ի դեմս Արվեստի ինստիտուտի, շարունակելու է մնալ հայ արվեստագիտության առաջատար կենտրոնը՝ իր շուրջը համախմբելով գիտական, ստեղծագործական եւ կատարողական աշխարհի երեւելի ներկայացուցիչների: Համոզված եմ, որ գիտաժողովի արդյունքները կդառնան կարեւոր եւ նշանակալի ներդրում միջազգային ասպարեզում», - ասաց ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Աշոտ Սաղյանը:

Արամ Խաչատրյանի անվան տուն-թանգարանի տնօրեն Արմինե Գրիգորյանը նշեց, որ Արամ Խաչատրյանի ստեղծագործությունների նկատմամբ երաժշտագետների կողմից հետաքրքրությունը տարիների ընթացքում միայն մեծանում է:

Արմինե Գրիգորյանը շնորհակալություն հայտնեց հյուրերին, որոնք ժամանել են Երեւան՝ մասնակցելու գիտաժողովին, այդ թվում՝ Արամ Խաչատրյանի թոռնուհուն՝ Օլգա Կուզինային:

Հավելենք, որ գիտաժողովի աշխատանքները կշարունակվեն մինչեւ սեպտեմբերի 14-ը: Գիտաժողովի ընթացքում ԱՄՆ-ից, Լատվիայից, Լիբանանից, Հայաստանից, Նիդեռլանդներից, Շվեդիայից, Ռուսաստանից եւ Ուկրաինայից ժամանած արվեստի գործիչները հանդես կգան շուրջ 4 տասնյակ գիտական զեկուցումներով՝ ներկայացնելով հայ ականավոր կոմպոզիտորի ստեղծագործական, կատարողական ու երաժշտական-հասարակական գործունեությունը, ստեղծած կոմպոզիտորական դպրոցը, Արամ Խաչատրյանի դերը մշակութային դիվանագիտության զարգացման գործում, կերպարը հայ կերպարվեստում, արվեստի ազդեցիկ նշանակությունը երաժշտագիտական մտքի վրա:

ԱՇԽԱՐՀ

ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ Է ԹՐԵՅԼԵՐԸ

Apple TV+-ը ներկայացրել է «Սուպերմոդելներ» վավերագրական ֆիլմաշարի պաշտոնական թրեյլերը: 90-ականների հայտնի մոդելները տասնամյակների ընթացքում առաջին անգամ հավաքվում են մեկ հարկի տակ՝ պոդիումում պատմելով իրենց ընկերության պատմությունները:

Չորս մասից բաղկացած սերիալը, որի ռեժիսորներն են Ռոջեր Ռոս Ուիլյամսը եւ Լարիսա Բիլսը, պատմում է սուպերմոդելների մասին իրենց իսկ շուրթերից, ինչպես նաեւ իրենց կարծիքն են հայտնում ոլորտի փորձագետները: Vogue-ից Էդվարդ Էննինֆուլից մինչեւ դիզայներ Դոննա Կարենը ճանապարհորդություն է ժամանակի միջով՝ մի դարաշրջան ուսումնասիրելու համար: Նաոմի Քեմփբելը մանրամասնում է 90-ականների սկզբին ռասիզմի հետ կապված իր փորձառությունները, իսկ Լինդա Եվանգելիստան խոսում է անպետք զգալու մասին:

Սինդի Քրոուֆորդը, Նաոմի Քեմփբելը, Լինդա Եվանգելիստան եւ Քրիստի Թերլինգթոնը միասին հեղափոխեցին մոդելային արդյունաբերությունը հաջորդ սերնդի համար՝ կոտրելով ավանդական գեղեցկության սահմանները:

ՀԱՅՏՆՎԵԼ Է ԵԶՐԱՓԱԿՉՈՒՄ

Ռուսական Россия1 հեռուստաալիքով մեկնարկել է Ну-ка, все вместе հայտնի նախագծի 5-րդ՝ հոբելյանական եթերաշրջանը: Նախորդ շաբաթ տեղի է ունեցել երաժշտական մրցույթի առաջին համերգը, որին մասնակցել է նաեւ հայազգի Արմեն Գրիգորյանը:

Արմենը ներկայացել է դասական ժանրում: 32-ամյա երգիչը, որը բնակվում է Մոսկվայում, առաջին ելույթից հետո ժյուրիի 100 անդամների կողմից հավաքել է 95 միավոր՝ զբաղեցնելով մրցութային օրվա 2-րդ հորիզոնականը: Նրա ելույթի ժամանակ կանգնել է նաեւ ժյուրիի նախագահ Սերգեյ Լազարեւը:

Համաձայն մրցույթի կանոնների՝ օրվա ավարտին 2-րդ եւ 3-րդ հորիզոնականները զբաղեցրած մասնակիցները պետք է մրցեն միմյանց դեմ, քանի որ միայն մեկն է ստանում ուղեգիր դեպի եզրափակիչ փուլ: Արմենի մրցակիցը վրացի Хвича-ն էր, որին մեր հայրենակիցը կարողացավ գերազանցել 2 միավորով՝ հավաքելով 90 ձայն:

Հավելենք, որ մրցույթի 3-րդ եթերաշրջանի հաղթողը հայ երգչուհի Սյուզաննա Մելքոնյանն էր:

ԱՐԺԱՆԱՑԱՎ ՄՐՑԱՆԱԿԻ

Բեյրութում կայացել է Beirut Golden Awards մրցանակաբաշխությունը, որի ժամանակ հայ ռեփեր Սուպեր Սաքոն ստացել է Life Time Achievement մրցանակը: Այս մասին ռեփերը կիսվել է ինստագրամյան էջի Story բաժնում:

«Life Time Achievement Award, բայց ես դեռ նոր եմ սկսում»,-գրել է երաժիշտը:

Հավելենք, որ օրեր առաջ Սաքոն բացօթյա համերգ էր ունեցել Երեւանում, որի ժամանակ բարձրաձայնել է Ադրբեջանի կողմից Արցախի շրջափակման մասին՝ միջազգային հանրության ուշադրությունը հրավիրելով խնդրի շուրջ:

ՍՊՈՐՏ

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՏՆԵՑ

Հայաստանի հավաքականի ու «Ալաշկերտի» դարպասապահ Օգնյեն Չանչարեւիչը գրառում է կատարել՝ շնորհակալություն հայտնելով ազգային հավաքականի երկրպագուներին:

«Շնորհակալություն բոլորիդ այս երկու խաղերում ցուցաբերած ապշեցուցիչ աջակցության եւ զգացողությունների համար: Մենք կվերադառնանք ավելի ուժեղ»,- գրել է Հայաստանի հավաքականի դարպասապահը:

Չանչարեւիչը Հայաստանի հավաքականի կազմում մասնակցել է «Եվրո-2024»-ի ընտրական փուլի Ուելսի (4:2), Թուրքիայի (1:1) ու Խորվաթիայի դեմ խաղերին (0:1):

ՄՅՈՒԼԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

Գերմանիայի հավաքականի հարձակվող Թոմաս Մյուլերը մեկնաբանել է 2:1 հաշվով հաղթանակը աշխարհի փոխչեմպիոն Ֆրանսիայի հավաքականի նկատմամբ Դորտմունդում տեղի ունեցած ընկերական խաղում: Մյուլերը դարձել էր գոլի հեղինակ:

«Գիտեինք, որ շատ ենք վազելու: Ֆրանսիայի թիմը տպավորություն է ստեղծում, որ պայքարելու հնարավորություն է տալիս. նրանք երբեմն դիտավորյալ են գնդակը զիջում մրցակցին:

Մեր արագ գոլը նպաստեց հաջողությանը: Գիտեինք, որ ծանր աշխատանք պետք է կատարենք: Անհաջող հանդիպումների շարքի ազդեցությունը հաղթահարելը հեշտ չէ: Հանսի Ֆլիկին հրաժեշտը ծանր էր: Պետք է շնորհավորենք Ռուդի Ֆյոլերին, Հանես Վոլֆին եւ Սանդրո Վագներին:

Հաճելի է Ֆրանսիային հաղթելը, բայց պետք չէ գերագնահատել այս խաղը. առջեւում դեռ երկար ճանապարհ ունենք: Սա հուզական ազատագրման փոքր պահ էր»,- Մյուլերի խոսքը մեջբերում է L'Équipe-ը:

Գերմանիայի հավաքականը չէր հաղթել նախորդ հինգ հանդիպումներում:

Գերմանիան «Եվրո-2024»-ի կազմակերպիչ երկիրն է եւ ազատված է ընտրական մրցաշարից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Բելգիայի Անտվերպեն քաղաքում սեպտեմբերի 25-ից հոկտեմբերի 9-ը անցկացվելիք սպորտային մարմնամարզության աշխարհի առաջնությունում Հայաստանը կունենա 5 մասնակից:

ՀՄՖ-ի փոխանցմամբ՝ կմասնակցեն Արթուր Դավթյանը, Հարություն Մերդինյանը, Վահագն Դավթյանը, Արթուր Ավետիսյանը, Գագիկ Խաչիկյանը:

Այս պահին (11.09-25.09) Հայաստանի թիմը ամբողջ կազմով անցկացնում է ուսումնամարզական հավաք Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիում:

Աշխարհի առաջնությունը վարկանիշային է Փարիզի օլիմպիական խաղերի համար:

● Սեպտեմբերի 15-ին «Բոհեմ» թատրոնում տեղի կունենա «Մորաքույրը՝ Փարիզից» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 2000-5000 դրամ: Սկիզբը՝ ժամը 19:00-ին:

Ժողովուրդ

www.ArmLur.am

ԵՂԵ՜Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՄԱՐԻԱՄ ՂԱԶԱՐՅԱՆԻ

ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐ

ՀԱՐՑ. Արդյոք ՄՊՎ-ի դեմ պատվաստանյութը որեւէ կողմնակի ազդեցություն ունի՞, եւ եթե ունի, ապա որո՞նք են դրանք:

Ալվարդ Մանասերյան (44 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. ՄՊՎ-ի դեմ պատվաստանյութը հաճախ առաջացնում է թեթեւ կողմնակի երեւույթներ: Ցավը, կարմրությունը, այտուցվածությունը ներարկման տեղում սպասվող կողմնակի երեւույթներ են: Որոշ մարդկանց մոտ կարող է դիտվել գլխացավ, ոչ բարձր ջերմություն, ցավ հոդերի կամ մկանների շրջանում կամ թեթեւ սրտխառնոց: Այս տեղային ռեակցիաները կամ կողմնակի երեւույթները սովորաբար տեւում են մեկ օրից ոչ ավել եւ վտանգավոր բնույթ չեն կրում:

Երբեմն անձը կարող է ուշագնաց լինել պատվաստման կամ այլ ներարկման ժամանակ: Սա ավելի տարածված է, երբ շատ երիտասարդներ պատվաստվում են խմբակային, օրինակ՝ դպրոցում: Ենթադրվում է, որ այս երեւույթը պայմանավորված է սթրեսով եւ անհանգստությամբ, ոչ թե պատվաստանյութով:

Պատվաստում ստացած 1,7 միլիոնից մեկի մոտ կարող է զարգանալ ալերգիկ ռեակցիա (ինչպես, օրինակ, անաֆիլակտիկ շոկ): Հետեւաբար, որպես նախազգուշացում, պատվաստվող անձը պատվաստումից հետո պետք է 30 րոպե մնա պոլիկլինիկայում:

ՀՀ ԱՆ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». ՄՊՎ-ի դեմ պատվաստանյութի հետ կապված կողմնակի ազդեցությունների կամ քրոնիկ առողջական խնդիրների հետ կապված լուրերը շրջանառվում են սոցիալական ցանցերում, դեռահասների շրջանում: Ավելի քան 270 մլն չափաբաժնի լայնատարած ուսումնասիրությունները եւ անվտանգության ընթացիկ մոնիթորինգը, որը ներդրված է ողջ աշխարհում, մինչ օրս չեն ապացուցում որեւէ նման հղում:

Եթե ինչ-որ անսպասելի դեպք տեղի ունենա, տեղեկացրե՛ք բժշկին: Բոլոր նման հաղորդումները լրջորեն ուսումնասիրվում են՝ տեսնելու համար՝ արդյոք առաջացած երեւույթները կապված են պատվաստանյութի հետ, թե կարող է լինել այլ պատճառ:

ԶՈՐԱԿՈՉ

ՀԱՐՑ. Ո՞րտեղ կարող է դիմել զորակոչի տարիքի ՀՀ քաղաքացին, եթե գտնվում է ՀՀ տարածքից դուրս եւ չի կարող սեփական միջոցներով վերադառնալ:

Առնակ Ալավերդյան (26 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Պարտադիր զինվորական ծառայության զորակոչին քաղաքացու ներկայությունն ապահովելու նպատակով համապատասխան տարածքային ստորաբաժանումը իսկ քաղաքացու՝ օտարերկրյա պետությունում բնակվելու եւ տվյալ պետությունում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունում կամ հյուպատոսական հիմնարկում հաշվառված լինելու դեպքում դիվանագիտական ներկայացուցչությունը կամ հյուպատոսական հիմնարկը քաղաքացուն փաստաթղթային կամ էլեկտրոնային եղանակով ծանուցում են տարածքային ստորաբաժանում ներկայանալու պարտավորության մասին:

ՀՀ ՊՆ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Քաղաքացուն փաստաթղթային կամ էլեկտրոնային եղանակով կատարված ծանուցման մեջ տարածքային ստորաբաժանում ներկայանալու պարտավորության մասին պետք է նշվի տարածքային ստորաբաժանում ներկայանալու ժամկետը:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

«Բարսելոնա»-ի, «Ռեալ»-ի եւ «Ինտեր»-ի կազմերում հանդես եկած պորտուգալացի հանրահայտ ֆուտբոլիստ Լուիշ Ֆիգուն Արարատի ֆոնին լուսանկար է հրապարակել:

Հիշեցնենք՝ Ֆիգուն Հայաստան էր այցելել եւ հանդիպել Հայաստանի ազգային հավաքականի նախկին ավագ, պաշտպան, ներկայում «Նոա» ֆուտբոլային ակումբի մարզիչ Ռոբերտ Արզումանյանի եւ այլ ֆուտբոլիստների հետ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը
Բաժանորդագրվելու
համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

✂

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ______________

Ազգանուն՝ ______________

Առաքման հասցե՝ ______________

Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ ______________

Հեռ.՝(060) 490049

0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ



Մարզ	Գիշեր / Ցերեկ
Շիրակ	+2 +6 / +18 +21
Կոտայքի լեռներ	+2 +5 / +16 +20
Կոտայքի նախալեռներ	+9 +12 / +19 +22
Գեղարքունիք	+2 +6 / +14 +18
Լոռի	+3 +7 / +18 +21
Տավուշ	+6 +10 / +20 +23
Արագածոտնի լեռներ	+3 +6 / +15 +19
Արագածոտնի նախալեռներ	+9 +12 / +20 +23
Արարատ	+10 +14 / +22 +26
Արմավիր	+11 +13 / +23 +26
Վայոց ձորի լեռներ	+2 +6 / +16 +19
Վայոց ձորի նախալեռներ	+10 +13 / +23 +26
Սյունիքի հովիտներ	+12 +15 / +19 +22
Սյունիքի նախալեռներ	+5 +11 / +13 +17
ԼՂՀ	+12 +15 / +19 +22
Երեւան	+15 +17 / +20 +22

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **13.9.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*